

ՄՇԿԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատողին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

«ՄՇԿԿ» ԼՐԱԳԻՐԸ

Յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը
կարժեանայ ՎեՅ ռուբլի:

Դիմել Тифлисъ, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
յուլիսի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղօրօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Մէկ ամսով բաժանորդ գրվել ցան-
կացողները վճարում են Մէկ ռուբլի:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԻՑԻՆ

Ամերիկական պահանջները.— Ներքին Տե-
սիսի Թիֆլիս. Գալիցիա Միտիսի յիշատակին.
Մեր պատասխանը «Շարքը Ռուսին».

Մի քանի ամիս առաջ «Շարքը Ռուսին»-ը
հարստից. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԻՑԻՆ. Պատերազ-
մի շուրջը. Գաղափարական տեսութիւն. Նամակ
Պարսկաստանից.— ՀեՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ՊԱՆԱՆՁՆԵՐ

Վերջին ժամանակներս լրագիրներին
մէջ մի քանի անգամ ապօրինի լուրեր,
որոնք յայտնում էին թէ Ամերիկայի
Միացեալ-Նահանգները կառավարութիւնը
վճել է ծովային մի գույց անել թիւը-
քիայի դէմ: Այդ լուրերին, հաւանականու-
թիւն էր ընծայում և այն հանգամանքը,
որ Միջերկրական ծովում իսլապէս ե-
րևացին ամերիկական զինուորական նա-
ւեր: Զիշդ է այդ նաւերը բաժանվել էին
այն նաւախմբից, որ մտնեցել էր Մարոկ-
կոյի ափերին որոշ քաղաքական նպա-
տանքներով, բայց նրանց յատկացվում էր
մի ինքնուրույն դեր, ուղղված դէպի Փոքր
Ասիայի ծովափները:

Կայ և մի ուրիշ հանգամանք, որ հա-
ւանական էր դարձնում ամերիկական
նաւերի շարժումը գէշել Միջերկրականի
արևելեան ափերը. դա այն է, որ մեծ
թուով թիւրիմացութիւններ ծագեցին
թիւրքիական մի քանի ամերիկացի քա-
ղաքացիների և թիւրքական վարչութեան
միջև և սուր արտայայտութիւն ստացան
ամերիկական դեսպանատան յարաբերու-
թիւնները Բարձր Դրան հետ:

Սակայն «Polit. Corresp.» թերթը, ամե-
րիկական նորագոյն աղբիւրների հիման
վրա այն կարծիքն էր յայտնում, որ մեծ
ծովային ցուցի մասին եղած լուրերը
չափազանցած կամ անհիմն են: Ստույգ
է մի բան, որ Ամերիկայի կողմից վեր-
ջերս առաջարկվել են թիւրքիայի կառա-
վարութեան մի շարք գանգաւներ, որոնց
վերաբերութեամբ բաւարարութիւն չէ
ստացվում ցանկալի արագութեամբ: Լ փու-
թալանութեամբ: Միացեալ-Նահանգները
մի միտքով թիւրքիական միայն ունեն, այդ
այն է, որ թիւրքիական աւելի ուշադիր,
ճշգրտաբան և արագաշարժ չէ միւս պե-
տութիւնների պահանջների վերաբերու-
թեանը և որ այդ կողմից բոլորն էլ անխը-
տիր միատեսակ վիճակի մէջ են:

Յամենայն դէպս մի բան պարզ է, որ
Միացեալ-Նահանգների կառավարութեան
համբերութիւնը մեծ փորձութեան է են-
թարկվել և նա որոշել է խօսել թիւրքիայի
հետ այնպիսի լեզուով, որ կարող լինի
համոզեցուցիչ և հեղինակաւոր լինել
թիւրքիայի համար: Կը լինի արդե՞ծ
ծովային ցուցի թէ դիպլոմատիական պա-
հանջի մի ուրիշ խօստաւոյն ձև, յամե-
նայն դէպս թիւրքիական գոյում է, որ գործ

ունի մի չափազանց ինքնուրույն և հա-
մարձակ պետութեան հետ, և որ ուրեմն
պէտք է աշխատէ բաւարարութիւն տալ
առաջարկված պահանջներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՑԻՆ

ԲԱՅՆԵՐԳ ՄԵՐԻՍԻՑԻՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մենք ստացանք մի երաժշտական աշխա-
տութիւն, նուիրված Միտիսի Միլապատացու
յիշատակին: Հեղինակն է Միլանիան, որ ունի
յօրինած նաև բազմաթիւ ուրիշ նուագներ մեծ
մասամբ դաշնամուրի, իսկ մասամբ էլ ջութա-
կի համար: Ներկայ աշխատութիւնը կոչված
է «Միտիսիան-բայիլեր» «Marche Méchitar»
և միացրել է իր մէջ դաշնամուրի և ջութակի
նուագաձուլութիւններ: Հրատարակված է մաքուր,
լաւ թղթի վրա, Վենիսիում և առաջին երեսի
վրա կրում է Միտիսի Միլապատացու պատ-
կերը:

Երաժշտական ներկայ աշխատութիւնը ընդ-
հանրապէս աղոյզված մի գործ է: Նա ասոր-
ժիւի է լսողութեան համար և ունի արտայա-
տիչ բնաւորութիւն: Միլապատ է մի փոքր նե-
րածութեամբ, որ ձգտում է հանդիսատեսը մի
կոչի նմանելու: Այնուհետև գալիս է մի գոյ-
տրիկ երաժշտական պատմութիւն, որի մէջ,
այնպէս է թուում, թէ՛ արտայայտված են Մի-
տիսի ջանքերը գործունէութիւն կազմա-
կերպելու, այդպէս լսվում են և մեղմ յորդը-
րներ, և յոյս, և մի սքողված վիշտ: Այնուհետև
հանդէս են գալիս բոլոր փոփոխութիւնները,
իսկ վերջում լսվում է մի գուրբ խայտառ
և ուրախութիւն:

Գալիցիայի առաջին մասում նշմարվում է
արևելեան եղանակի մի թիւթ գունաւորութիւն,
որ ճաշակով միացրած է եւրոպական կազ-
մութեան հետ: Վերջը եւրոպական-իտալական
է և յիշեցնում է ծանօթ եղանակ: Նա գեղե-
ցիկ, բայց կարծես փոքր ինչ անհամապատաս-
խան է գրութեան ազդու: Նրա մէջ պակաս է
վեհութիւնը, որ կարելի էր սպասել գը-
րութեան ընթացքից: Կամ թէ պէտք էր փոքր
ինչ էլ մեծացնել աշխատութիւնը և կցել
ախորժիկ խայտառքին մի դալայանք յայտ-
նող վերջաբան:

Միլանիանի գրութեամբ ընդունելութիւն կը
գտնէ հասարակութեան մէջ:

Միտի

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ՇԱՐՔԻՆ ՌՈՒՍԻՆ»-ԻՆ

Մեր ընթերցողներին յայտնի է Պարսկաս-
տանի Սարգիս քաղաքում պատահած ցաւա-
լի դէպքը: Մեր լրագիրը ապաց այդ դէպքի
մանրամասնութիւնները պատմող երկու նա-
մակ (№ 123 և № 129) և ստացած ունի նաև
ուրիշ քաղաքներից այլ թղթակցութիւններ,
որոնք, ժողովարարաբար, հաստատում են ցաւա-
լի դէպքի ճշդութիւնը: Մենք ապեցինք այդ
նամակները Սարգիսից, ապում ենք և այսօր
մի թղթակցութիւն Շահրուբից, միայն այն
պատճառով, որ տեսնում ենք, թէ Պարսկաս-
տանի մի անկիւնում տեղի է ունենում մի
անմիտ, քաղաքական և հակաարդարացի շար-
ժում, որից կարող են սուսիլ ոչ միայն հա-
յերը, որոնց դէմ է ուղղված այդ շարժումը,
այլ և ինքն պարսիկ ժողովուրդը, որ, տղե-
տաբար, մոլեռանդ հոգեւորականութեան ազ-
դեցութեան ներքոյ, զինաւորվում է մի տար-
րի դէմ, որի հետ զարբերվ ապրել է, գործել
է, յարաբերութիւններ է ունեցել: Եւ դժբախ-
տաբար, այդ առաջին դէպքը չէ. այդպիսի
դէպքեր եղան Գալիցիայում, Թաւրիզում մի բա-
նի տարի առաջ. նա կրկնվում է այսօր Սարգ-
իսում, նա կարող է կրկնվել վաղը Խորա-
սանի միւս քաղաքներում, ինչպէս երևում է
Շահրուբի այսօրվայ նամակից:

Այդպիսի ցաւալի դէպքերի առաջն առնելու
կոչված է ազնիւ, շիտակ մամուլը, այն մա-
մուլը, որ տղորդված չէ շօխիստ ոգով, որ

զիտէ հակամարդկային, մարդասիրական դա-
ղափարները և շահերը յարմարեցնել ազգայ-
նական շահերի հետ. այդպիսի ցաւալի դէպ-
քերը խափանելու համար պարտաւոր է գոր-
ծել իր պարտականութիւնները ճանաչող ին-
տելիգենցիան, քարոզելով համեղաշխութիւն,
սէր և փոխադարձ յարգանք մի և նոյն պե-
տութեան մէջ. ապրող այլակրօն և այլացեղ
տարբերի մէջ, իրեն մի և նոյն երկրի, ընդ-
հանուր հայրենիքի քաղաքացիներ:

Այդպէս և վարվել է «Մշակը» շարունակ, իր
ամբողջ գոյութեան ընթացքում. կրօնական
տարբերութիւններն ինչ որ մի նշանակութիւն
չէ տուել և միշտ դատապարտել, մտրակել և
կրօնական մոլեռանդութիւնից բղխած շար-
ժումները, ներշնչութիւնը: Մի և նոյն ժամա-
նակ կրօնական բոլոր համոզմունքներն ինչ
պարբերվել է մեծ յարգանքով, ընդունելով նոյն
իսկ մասնագիտական հայրի. գոյութիւնը, եթէ
այդ կրօնափոխութիւնը առաջ է եկել ոչ թէ
ընդի կերպով, այլ համոզմունքով, յօժարաբար:

Եւ մենք շատ ուրախ էինք, որ մեր երկրի
միակ թուրք թերթը, «Շարքը Ռուսը» գոր-
ծում է նոյն ուղղութեամբ: Եւս առաւել մեծ
է այժմ մեր զարմանքը, երբ «Շարքը Ռուսը»
շեղվում է իր ուղղութիւնից և, փոխանակ ա-
ջակցելու «Մշակին», ընդհակառակը, մեղադ-
րում է նրան այնպիսի վարմունքի մէջ, որը
մենք ամենակն չենք ունեցնել և որը հակառակ
է մեր ամբողջ ուղղութեան:

«Շարքը Ռուսը» մեղադրում է մեզ որ 1)
մենք յարգանքով չենք վերաբերվում մուսու-
լման կրօնին և նրա կրօնապետներին, 2) թըր-
քաւորութիւն և ատելութիւն ենք սերմանում
մասնագիտականների և քրիստոնեաների մէջ, 3)
զրպարտութիւններ ենք քարոզում մուսուլման-
ներին վրա: Չը բաւականաւորվ դրանով, նա
իր յարձակումները վաքում է այնպիսի եղա-
նակով, որ հակառակ է գրական էթիկային և
ընդունված չէ մամուլի մաքուր բարբերի տե-
սակէտից:

«Շարքը Ռուսը» ասում է, որ մենք պատ-
կանաւորվ և յարգանքով չենք վերաբերվել
Շէյխ Մահաւազ Հասան մամադանցի մուշթե-
իդին և նախադար, մամադանցի կրօնին,
բանի որ այդ մուշթեիդը ամբողջ 60 միլիոն
շիա-մահմադական ժողովրդի կրօնապետն է և
հովուապետը, մինչ իրանը, մուսուլմանները և
«Շարքը Ռուսը» յարգանքով և պատկանաւորվ
են վերաբերվում հայոց Կաթողիկոսին, որ
այդ մուշթեիդի ունեցած հօսի մի տասնե-
րորդ մասն անգամ չունի: Եւ մի համոզու-
համար, թէ, արդարև, այդպիսի անպիսի հե-
ղինակութիւն է վայելում Շէյխ Մահաւազ Հա-
սան մամադանցի մուշթեիդը, նա ասում է,
որ ներկայ Մուշթեիդէիդին Շահր կամեցաւ
տեսակցել այդ մուշթեիդի հետ, բայց սա
ինքն չը բարեհաճեց գնալ Շահր այցելութեան,
այլ իրան Շահրին «Իր ուխտագնացութեան
երեսւ», այսինքն Շահր ստիպվեց ինքն գնալ
իր ոտքով մուշթեիդի տեսութեան:

Ապա «Շարքը Ռուսը» յայտնում է, որ յար-
գելի մուշթեիդին վերաբերած յայտարարու-
թիւնը կամ վճիռը հայերի դէմ մեր թղթակցի
կողմից յերբերված զրպարտութիւն է, որով-
հետև, ասում է նա «Շէյխ Մահաւազ Հասան
60 միլիոն շիաների կրօնապետն է, շէրիաթի
աւանդապետն է, նա աւարխիս կամ հնչա-
կիս կամ յեղափոխական չէ, որ մի ժողովը-
րին զրգուէ սպանել, կողոպտել մի ուրիշ ժո-
ղովուրդ:

Այդ բոլորի հիման վրա, թուրք թերթը ա-
սում է, որ մենք այդպիսի մեր վարմունքով
թշնամութիւն և ատելութիւն կարող ենք սեր-
մանել երկու հարևան ազգերի մէջ, վերաւո-
րելով շիա ժողովրդի կրօնական զգացումները
և զրպարտութիւններ բարդելով նրա կրօնա-
պետի վրա, փոխանակ աշխատելու սէր և բա-
րեկամութիւն հաստատել մի և նոյն երկրում
իրար կողքին ապրող հարևան ժողովուրդներին
մէջ:

«Շարքը Ռուսը» չարաչար սխալվում է իր
դատողութիւնների և եղբակցութիւնների մէջ:

այդ մենք ցոյց կը տանք վաղը փաստօրէն:
Եւ մեր ընթերցողները լաւ գիտեն, որ «Մշա-
կը» երբէք նպատակ չէ ունեցել վերաւորանք
հասցնել շիա կրօնին կամ նրա կրօնապետնե-
րին, երբէք չէ ձգտել թշնամութիւն, ատելու-
թիւն սերմանել մասնագիտական և քրիստոնեայ
տարբերի մէջ, ոչ թէ միայն այժմ, այլ և իր
ամբողջ գոյութեան ընթացքում:

ՄԻ ԾՐԱԳՐԻ ԱՌԻԹՈՎ

Մարդկային պատմութիւնը դասակարգելի
կուի պատմութիւնն է, ասել են դեռ 1847
թւին մի քանի հանճարեղ գրողներ:

Ճորտատէր դասակարգի գոյութեան վրա
արդէն խաչ է դրվել Ռուսաստանում 1861
թւին: Ճորտատէրերին տրվել է հող, հողի
փոխարէն յաճախ և դրամ: Ճորտատէրու-
թիւնը վերջացել է և նրան յաջորդել է դրա-
մատէրը—ի հարկէ «ցնոր տնօրէնութիւն»: Զէ
որ ոչինչ յաւիտեական չէ այս անցաւոր աշ-
խարհում:

Բայց արդեօք դիւրութեամբ համաձայն-
վում է մենք մի դասակարգ: Ո՛չ, բո-
ւորովին ոչ: Նա կախատէ դիմադրել, ի
հարկէ եթէ ոյժ ունի, ինչպէս արին նրանք
եւրօպայի շատ երկրներում. իսկ եթէ նրանք
անոյժ են, ատափները հանված ու կծելու ան-
ընդունակ՝ ինչպէս ուսական լայնածաւալ
կայսրութեան մէջ էր այդ դասակարգը Ազա-
տարար Կայսրի օրով՝ այն ժամանակ նա խո-
նարկվում է, յոյսը կտրում դիմադրութիւնից
և դիմում ուրիշ միջոցներ: Միայն, աղբիւր,
նոր-նոր ծրագիրներ առաջարկել, «հայրենիքի
օգտի համար» փրկարար նոր միջոցներ տալ,
և այն, և այն: Իսկ այդ բոլորի տակ, իսկա-
պէս թաքնված է լինում միտք դասակարգա-
յին շահը, հին, երջանիկ ժամանակներին վե-
րադառնալու քոչվոր ցանկութիւնը:

Ռուս-կապոնական արեւմտահայ կուրը նորից
տեղի է տուել ճորտատէր մտած դասակար-
գի ճէտերից մէկին՝ Կուրսի մի հողատերի
«հայրենիքի օգտի անուումով», մի նոր ծրագիր
առաջարկելու:

Եւ ինչ մեծագոյն անուն է ընտրել այդ
անանուն հեղինակը.— «Китай или мы» («Չի-
նաստանը կամ մենք») կոչվում է նրա
բրօշուրը, որից «Юрист»-ում պ. Եւրօսով-
սկին բերում է մի քանի քաղաքական: Հե-
տեմէր այդ Կոչիլու ու Շէյխերին գրէին վայել
հերոսի մտքերին: Նա առաջարկում է շուտով
գրաւել Չինաստանը և նրա ժողովրդին բա-
ժանել իրեն ճորտ՝ ուս պոնուականներին»...

Զրի չէ—այլ ծախել...
«Ամեն մի ուս իշխան, կոմ, նոյնպէս և ժառան-
գական ազնուական, որի տոհմից արձանագրված
է իր նախնիների գոնէ երեք սերունդ իրանից ա-
ռաջ և որը գին 21 դեռնատի հող, իրաւունք ունի
զանազանից գնելու չինական մէկ ընտանիք, իսկ
այդ 21 դեռնատից աւելի ունեցողին ամեն մէկ 36
դեռնատի համար կարող է գնել չինական մէկ ըն-
տանիք»:

Այդ յօդուածն ունի մի ծանօթութիւն. «Չինաստ-
նութիւնից պէտք է բոլորովին դուրս գցել բարձր
սիւղաւոր, որը իսկական Ռուսաստանի հետ ոչ մի
ընդհանուր բան չունի»:

§ 2) «Չինական ընտանիքի լիակատար կազմը լի-
նելու է—3 տղամարդ 10—15, 15—40 և 40—55 տա-
րեկան, և 3 կինը՝ 10—15, 15—30 և 35—50 տարե-
կան»:

Մ ան օ թ ու թ իւ Ն. «Դանձաւոր պէտք է դադ-
թեցնէ և ծախէ այդպիսի կազմով և հասակով չինա-
կան ընտանիքները նրա համար, որպէս զի որ և է հա-
սակի կամ սեռի համար յատուկ պահանջ չառաջանալ,
որը բոլորովին ծախիլ, վերջնայ և զանազանը
մնացածների հետ չը գիտնալ՝ թէ ինչ անէ: Նոյն-
պէս և ապառքում, չինական ազգաբնակչութեան ա-
ճեցողութեան համար՝ ընտանիքները այդպիսի բաշ-
խումն ամենաբնականը կը լինի»:

Յետոյ յիշվում են ճորտերի գները: Ան-
չափահաս և ծերացած չինացու հասն արժէ
100 ռ., իսկ չափահասը—400 ռ.: Իսկ կանայք
գնահատված են տղամարդկանց արժէքի կէսը:
Կուրսի հողատէր-ազնուականը մի ամբողջ
յօդուած է նուիրել գներին, դնելով բարե-
խիղճ ու մանրամասն ծանօթութիւններ:

Թէև, ասում է պ. Եւրօսովսկին, բոլոր առաջ բե-
րած պարագրաֆները լիովին ցոյց են տալիս, թէ

Պօրտ-Արտուրի վիճակը: Զիֆուլց հեռագրում
են »Standard» լրագրին, որ Պօրտ-Արտուրից
այդտեղ հասած չինացիները հաղորդում են,
Թէ յունիսի 16-ին հապօնացիները ումբակո-
ծեցին Պօրտ-Արտուրը, բայց ումբակոծումը
որ է և արդիւնք չունեցաւ: Յունիսի 19-ին
Պօրտ-Արտուրի նաւահանգստում գտնվում էին
վրայն 9 ուսուսկան նաւեր, բացի նաւաշի-
ւարանում կարկաւումվող ականանաւերից: Մնա-
ած նաւերը գտնվում էին ծովի վրա: Զինա-
վորների խօսքով, հապօնացիները գրաւում են
Պօրտ-Արտուրը չրջապատող բարձրութիւն-
ները: Նրանք ամբողթիւններ են կառուցա-
ւում Լունգլունանտունում և Գայլի սարի վրա
և բռնեն են Գուռն-Միչուն ու Շան-Զին-Պուն:
(T. A.)

Տիրեհէշեմի կուռի սրօճեմները: Եապօնականն
«Չի-Չի» լրագիրը նկարագրում է Տիրեհէշեմի
տրօֆէները, այսինքն հապօնացիների իւրած
յարթական աւաւները. 1) այն իրերը, որոնք
պատկանում էին ռուսաց զօրքին, համարվում
էին իսկական տրօֆէներ, այսինքն չին վերա-
գարձուելու Ռուսաստանին պատերազմից յե-
տոյ. 2) այն իրերը, որոնք պատկանում էին
ռուս էրմէ անձնօրէն, եթէ նրանց տէրերը
յայտնի են, օրինակ, եթէ իրերի վրա կան
նշաններ, կը վերադարձնվին տէրերին պա-
տերազմից յետոյ. 3) Կարմիր Սաչին պատկա-
նող բոլոր իրերը կը վերադարձնվին Ռուսաս-
տանին: Առաջին կարգի տրօֆէները ուղարկ-
վելու են անմիջապէս Եապօնիա. ռուսներէց
վերցրած բայց փչացրված թղանաթների մէջ
գտնվել են մի քանի թղանաթներ, բոլորովին
պէտքական գործածութեան համար: Ռուսները
չեն կարողացել կամ չեն համոզել փչացնել
այդ թղանաթները, այլ միայն հանել են մա-
սերը և թագցրել մացառների մէջ: Նայելով
տրօֆէներին, ասում է հապօնական լրագիրը,
ռուսները զարմանալի կերպով լաւ են պա-
հում իրանց թղանաթները: Երևում է, որ ռուս
արտիլէրիստը սիրում է իր թղանաթը ոչ
պակաս, քան հապօնացին: (Русь)

